Քաղաքացիական գործ թիվ ԳԴ/0868/02/17
2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» դեկտեմբերի 2023 թվական ք. Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործով ըստ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Լիլիկ Հակոբյանի, Հասմիկ Բաբիկյանի, Մանուշ Հովսեփյանի, Ռուզաննա Սարգսյանի, Լյուբա Չքոյյանի և Տաթևիկ Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ու ըստ Լիլիկ Հակոբյանի հակընդդեմ հայցի ընդդեմ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, երրորդ անձինք Մանուշ Հովսեփյանի, Հասմիկ Բաբիկյանի, Ռուզաննա Սարգսյանի, Լյուբա Չքոյյանի և Տաթևիկ Խաչատրյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանի 08.12.2023 թվականի «Ենթակայությունը որոշելու նպատակով քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մանուկյանը, քննելով «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներկայացուցչի միջնորդությունը, 10.10.2023 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործի վարույթն ըստ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Լիլիկ Հակոբյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասով կարճելու, երաշխավորներ Հասմիկ Բաբիկյանի, Մանուշ Հովսեփյանի, Ռուզաննա Սարգսյանի, Լյուբա Չքոյյանի և Տաթևիկ Խաչատրյանի դեմ

ուղղված պահանջի, ինչպես նաև Լիլիկ Հակոբյանի հակընդդեմ հայցի մասերով քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին այն պատճառաբանությամբ, որ Լիլիկ Հակոբյանը թիվ ՍՆԴ/1353/04/23 սնանկության գործով 08.05.2023 թվականին կայացված վճռով, որը մտել է օրինական ուժի մեջ, ճանաչվել է սնանկ, իսկ պատասխանողների երաշխավորությամբ ապահովվել է Լիլիկ Հակոբյանի կողմից պարտավորությունների ամբողջական ծավալով կատարումն ու նշված քաղաքացիական գործը վերաբերում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին, պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրին:

Թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը Սնանկության դատարանում ստացվել է 28.11.2023 թվականին և նույն օրը հանձնվել է Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանին:

Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանը, պատճառաբանելով, որ իր վարույթում եղած թիվ ՍՆԴ/1353/04/23 սնանկության գործով 01.12.2023 թվականին վճիռ է կայացվել սնանկության գործն ավարտելու մասին, որպիսի փաստի ուժով նշված սնանկության գործն այլևս չի գտնվում իր վարույթում, գտել է, որ տվյալ դեպքում համապատասխան իրավակարգավորումների ուժով բացակայում է թիվ ՍՆԴ/1353/04/23 սնանկության գործի շրջանակներում թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը քննելու հնարավորությունը: Արդյունքում Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանը, վերը նշված պատճառաբանությամբ համաձայն չլինելով թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա չլինելուն, 08.12.2023 թվականին որոշում է կայացրել թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին:

Թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 25.12.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին իրավունք է վերապահել գործն ըստ ենթակայության հանձնելու Սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության Սնանկության դատարանում: Միաժամանակ գործն ըստ ենթակայության ստացած Սնանկության դատարանի դատավորը պարտավոր է յոթնօրյա ժամկետում որոշում կայացնել այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վերջին դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը, որի դեպքում որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մանուկյանը, գործը քննելիս պարզելով, որ այն վերը նշված պատճառաբանությամբ ենթակա է քննության Սնանկության դատարանում, գործն ըստ ենթակայության հանձնել է Սնանկության դատարանի քննությանը: Իր հերթին գործն ըստ ենթակայության ստացած Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանը, վերը նշված պատճառաբանությամբ համաձայն չլինելով գործի՝ Սնանկության դատարանին ենթակայությանը, որոշում է կայացրել գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել որոշելու գործի ենթակայությունը:

Դրանից ելնելով՝ անհրաժեշտ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սպառիչ սահմանել է այն գործերի ցանկը, որոնք սնանկության գործը վարող դատավորը կարող է քննել նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ: Դրանք են՝

1) սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ վեճերով քաղաքացիական գործերը,

2) երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ վեճերով քաղաքացիական գործերը,

3) պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճերով քաղաքացիական գործերը:

Ընդ որում, վերը նշված թվով երեք տեսակի գործերից յուրաքանչյուրի դեպքում անհրաժեշտ պայման է վեճի հետևանքով սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունենալը:

Նշված գործերից բացառություն են կազմում կառավարչի կողմից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերը:

Տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործի ենթակայության մասին վեճը լուծելու համար վերը նշված նորմատիվ իրավական ակտերի համատեքստում նախ անհրաժեշտ է պարզել հետևյալ հարցը՝

արդյո՞ք Սնանկության դատարան ուղարկված մասով թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է այդ հոդվածին համապատասխանող:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ հիմք ընդունելով սույն գործով ներկայացված հայցադիմումում և հակընդդեմ հայցում նշված, համապատասխանաբար, հայցի ու հակընդդեմ հայցի հիմքերը և առարկաները՝ Սնանկության դատարան ուղարկված մասով վերը նշված գործը հանդիսանում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխանող, քանի որ հակընդդեմ հայցը սնանկ ճանաչված պարտապան Լիլիկ Հակոբյանի գույքի կազմում ներառված գույքի ու իրավունքների, վերջինիս և պարտատեր «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (սնանկության գործով հանդիսացել է գրանցված պարտատեր) մասնակցությամբ կնքված պայմանագրի առնչությամբ ծագած վեճերի վերաբերյալ է, իսկ հայցը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով երրորդ անձ հանդիսացող Հասմիկ Բաբիկյանին, Մանուշ Հովսեփյանին, Ռուզաննա Սարգսյանին, Լյուբա Չքոլյանին և Տաթևիկ Խաչատրյանին պատկանող ապահովված իրավունքի (երաշխավորություն) առարկայի վերաբերյալ վեճով է: Ընդ որում, վերը նշված վեճերից յուրաքանչյուրի հետևանքով հնարավոր էր ազդեցությունն առնվազն պարտատերերի պահանջների բավարարման վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործով իրավասու դատարան է հանդիսանում Սնանկության դատարանը, որի պայմաններում գործը ենթակա է Սնանկության դատարանին:

Ինչ վերաբերում է Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանի պատճառաբանությանն այն մասին, որ թիվ ՍնԴ/1353/04/23 սնանկության գործով 01.12.2023 թվականին սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացված լինելու պայմաններում նշված գործն այլևս իր վարույթում չգտնվելու ուժով բացակայում է համապատասխան իրավակարգավորումների հիմքով նույն սնանկության գործի շրջանակներում թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը քննելու հնարավորությունը, ապա կարծում եմ, որ այն չէր կարող բավարար հիմք հանդիսանալ թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին որոշում կայացնելու համար, քանի որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ սնանկության գործն ավարտվելու դեպքում առանձին քաղաքացիական գործերի քննությունը շարունակվում է, եթե առկա չեն այդ գործերի վարույթը կարճելու կամ այդ գործերով հայցը առանց քննության թողնելու հիմքեր: Այսինքն՝ տվյալ դեպքում Սնանկության դատարանի դատավոր Գ. Ավագյանը, պահպանելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը, պետք է վարույթ ընդուներ թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը և այն քններ, եթե առկա չլինեին այդ գործի վարույթը կարճելու կամ այդ գործով հայցն առանց քննության թողնելու հիմքեր:

Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԳԴ/0868/02/17 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Սնանկության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**